ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԴՐԱՆ ՈՒՂԵԿՑՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԾՁԲ-20/4»

ք. Երևան

«06» մարտի 2020 թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արամ Կոստանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը և մատուցել նույն հավելվածով նախատեսված ծառայությունը (այսուհետ՝ միասին Պայմանագրի առարկա), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Պայմանագրի առարկան և վճարել դրա համար: N 1 հավելվածով չնախատեսված ապրանքի կամ ծառայության գնումը իրականացվելու է Պայմանագրի գնի սահմաններում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով ներկայացված են ապրանքների և ծառայությունների մեկ միավորի գները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Պայմանագրի առարկան պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Պայմանագրի առարկայից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Պայմանագրի առարկա՝

ա) պահանջել հատուցելու Պայմանագրի առարկայի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Պայմանագրի առարկան՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Պայմանագրի առարկան պայմանագրին համապատասխանող որակի Պայմանագրի առարկայով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Պայմանագրի առարկայի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի Պայմանագրի առարկա, ապա՝

ա) պահանջել լրացնելու Պայմանագրի առարկայի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Պայմանագրի առարկայից և դրա համար վճարելուց, իսկ եթե Պայմանագրի առարկայի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Պայմանագրի առարկա, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Պայմանագրի առարկան և հրաժարվել մնացած Պայմանագրի առարկաներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Պայմանագրի առարկաներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Պայմանագրի առարկայի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Պայմանագրի առարկայով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Պայմանագրի առարկայի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Պայմանագրի առարկա՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության

չափով, ինչպես նաև Պայմանագրի առարկան այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Պայմանագրի առարկա, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Պայմանագրի առարկայի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել Պայմանագրի առարկան և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված Պայմանագրի առարկայի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած Պայմանագրի առարկայից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Պայմանագրի առարկայի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Պայմանագրի առարկան ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Պայմանագրի առարկայի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Պայմանագրի առարկայի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված Պայմանագրի առարկան:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Պայմանագրի առարկայի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Պայմանագրի առարկայի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Պայմանագրի առարկան:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել Պայմանագրի առարկան՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով: Կատարողը իրականացնելու է Հունդայի Սանտա Ֆե 2011թ., հզորությունը ԿՎՏ/Զ.Ու. 128/174, Հունդայի Սանտա Ֆե 2015թ., հզորությունը ԿՎՏ/Զ.Ու. 129/176, Շեվրոլե Նիվա 2007թ. ԿՎՏ/Զ.Ու. 57/78 մեքենաների տեխնիկական սպասարկում:

2.4.2 Ապահովել Պայմանագրի առարկայի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Պայմանագրի առարկա:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի Պայմանագրի առարկա՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Պայմանագրի առարկայի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Պայմանագրի առարկան կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Պայմանագրի առարկան պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել Պայմանագրի առարկայի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է առավելագույնը 900,000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է նաև պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Պայմանագրի գինը ենթակա է նվազեցման ըստ Կատարողի կողմից փաստացի մատուցած ծառայության:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Պայմանագրի առարկայի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագ-րությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՈՐԱԿԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված Պայմանագրի առարկայի որակի համապատաս-խանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված Պայմանագրի առարկան ընդունվում է Գնորդի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Պայմանագրի առարկան Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով Պայմանագրի առարկայի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Պայմանագրի առարկան Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Պայմանագրի առարկան համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Պայմանագրի առարկան չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված Պայմանագրի առարկան կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված Պայմանագրի առարկան համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած Պայմանագրի առարկայի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված Պայմանագրի առարկայի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Պայմանագրի առարկայի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Պայմանագրի առարկա մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Պայմանագրի առարկայի ծավալների կամ ձեռք բերվող Պայմանագրի առարկայի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Պայմանագրի առարկայի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել Պայմանագրի առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Պայմանագրի առարկայի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Պայմանագրի առարկայի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Պայմանագրի առարկայի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ԿԱՏԱՐՈՂ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	«ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 46
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ	Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ\Հ 163518012543	Հ\Հ 1570017878010100
ՀՎՀՀ 02602449	ՀՎՀՀ 02240041
Գործադիր տնօրեն՝	Տնօրեն՝
_____ Ա.Աբրահամյան	_____ Ա. Կոստանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.S.	Կ.S.

Հավելված N 1
«06» մարտի 2020 թ. կնքված N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԾՁԲ-20/4» ծածկագրով պայմանագրի
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Պայմանագրի առարկայի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը և ապրանքային նշանը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	քանակ
Ապրանքներ				
1	Անտիֆրիզի 1լ.	հատ	4000	1
2	Ապահովիչ	հատ	2000	1
3	Առջևի և հետևի բացքի կարգավորում	հատ	12500	1
4	Արգելակման կոճղակ հետևի	հատ	16000	1
5	Արգելակման կոճղակ դիմացի	հատ	18000	1
6	Դիմապակու չսառող հեղուկ 1լ.	հատ	1000	1
7	Խնձորակ	հատ	10000	1
8	Կայունարարի հենակ աջ	հատ	10000	1
9	Կայունարարի հենակ ձախ	հատ	12000	1
10	Կայունարարի ռետին	հատ	4500	1
11	Կունդի հեղույս	հատ	2000	1
12	Կունդի մանեկ	հատ	2000	1
13	Ձգան	հատ	12000	1
14	Մեղմիչ	հատ	60000	1
15	Մեղմիչի բաժակ	հատ	25000	1
16	Յուղի զտիչ	հատ	3500	1
17	Շարժիչի յուղ 4 լ.	հատ	20000	1
18	Շարժիչի յուղ 5 լ.	հատ	25000	1
19	Շարժիչի լվացող նյութ	հատ	7000	1
20	Ռեդուկտորի վռան	հատ	15000	1
21	Վռան	հատ	6500	1
22	Փեջի զտիչ	հատ	7500	1
23	Փոկ	հատ	8500	1
24	Օդի զտիչ	հատ	7500	1

Ծառայություններ				
1	Անտիֆրիզի սպիրտի փոխարինում 1լ.	հատ	2000	1
2	Արգելակման կոճղակի փոխարինում	հատ	2000	1
3	Խնձորակի փոխարինում	հատ	5000	1
4	Կայունարարի հենակի փոխարինում	հատ	5000	1
5	Կայունարարի ռետինի փոխարինում	հատ	5000	1
6	Կունդի հեղույսի փոխարինում	հատ	1500	1
7	Կունդի մանեկի փոխարինում	հատ	1500	1
8	Ձգանի փոխարինում	հատ	5000	1
9	Մեղմիչի բաժակի փոխարինում	հատ	5000	1
10	Մեղմիչի փոխարինում	հատ	20000	1
11	Յուղի զտիչի փոխարինում	հատ	500	1
12	Շարժիչի յուղի փոխարինում	հատ	500	1
13	Ռեդուկտորի վռանների փոխարինում	հատ	55000	1
14	Վռանի փոխարինում	հատ	12500	1
15	Փեջի զտիչի փոխարինում	հատ	500	1
16	Փոկի փոխարինում	հատ	9000	1
17	Օդի զտիչի փոխարինում	հատ	500	1

Կատարողը իրականացնելու է Հունդայի Սանտա Ֆե 2011թ., հզորությունը ԿՎՏ/Ձ.Ու. 128/174, Հունդայի Սանտա Ֆե 2015թ., հզորությունը ԿՎՏ/Ձ.Ու. 129/176, Շեվրոլե Նիվա 2007թ. ԿՎՏ/Ձ.Ու. 57/78 մեքենաների տեխնիկական սպասարկում:

Ապրանքների մատակարարումը և դրան ուղեկցող ծառայության մատուցումը կատարվելու է պատվերի հաստատումից հետո մինչև 31.12.2020թ. (ըստ պատվիրատուի փաստացի պատվերների՝ պատվերի տրամադրման օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում)

Տեղադրվող ապրանքները պետք է լինեն չօգտագործված, անհատական գործարանային փաթեթավորմամբ:

Ապրանքները տեղադրվելու են Կատարողի կողմից իրեն պատկանող սպասարկման սրահում:

ԳՆՈՐԴ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
ՀՀ 163518012543
ՀՎՀՀ 02602449
Գործադիր տնօրեն
_____ Ա.Աբրահամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 46
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570017878010100
ՀՎՀՀ 02240041
Տնօրեն՝
_____ Ա. Կոստանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«06» մարտի 2020 թ. կնքված
N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԾՁԲ-20/4» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Պայմանագրի առարկայի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111110/1	Ծառայողական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ	Վճարումն իրականացվելու է պայմանագրի առարկայի մատակարարումից հետո՝ երկկողմ ստորագրված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 30 (երեսուն) բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:											**900 000**

ԳՆՈՐԴ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուխնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
ՀՀ 163518012543
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն

---------- Ա.Աբրահամյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՀԱՅԿ ԸՆԴ ՍԱՆՍ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 46
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570017878010100
ՀՎՀՀ 02240041

Տնօրեն՝

---------- Ա. Կոստանյան
(ստորագրություն)

Կ.Տ.